ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ
պարոն Եղիազար Վարդանյանին

քաղաքացի՝ Վահրամ Մկրտչի Ջալալյանից
հաշվառման հասցե՝ Երևան, Դավթաշեն 4-րդ թ., շ. 4, բն. 2
էլեկտրոնային փոստ՝ vahram.jalalyan@yahoo.com
հեռախոսահամար՝ +374 91 477 369

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ

Հարգելի պարոն Վարդանյան, խնդրում եմ ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշման 4-րդ կետով հաստատված N 4 հավելվածի պահանջներին համապատասխան ինձ ընդգրկել Քաղաքաշինության կոմիտեի նախագահին կից հասարակական խորհրդի կազմում:

Մարզը և համայնքը, որտեղ հայտատու ֆիզիկական անձը ծավալում է իր գործունեությունը.

ք. Երևան

Քաղաքաշինության բնագավառի գործունեության այն ոլորտը, որում հայտատու ֆիզիկական անձն ունի համապատասխան գործունեության փորձ կամ մասնագիտական փորձառություն.

Նորմատիվ-իրավական փաստաթղթերի, շինարարական նորմերի, նախագծման ուղեցույցների և շտեմարանների մշակում/տեղայնացում, շենքերի էներգաարդյունավետություն, շենքերի անձնագրավորում, շենքերի էներգետիկ աուդիտի իրականացում (մանրամասները՝ կից ինքնակենսագրականում):

Լրացուցիչ նշումներ.

Ունեմ էներգետիկայի ոլորտում 25-ից ավելի տարվա աշխատանքային փորձ, որոնցից 18 տարի՝ կլիմայի փոփոխության, շենքերի էներգաարդյունավետ վերակառուցման և վերականգնվող էներգիայի ոլորտներում:
Իմ նախագծերի կառավարման փորձը գերազանցում է 15 տարին: Ունեմ զգալի

<u>փորձ աշխատելու միջազգային դոնոր կազմակերպությունների, միջազգային ֆինանսական ինստիտուտների (IFI), տարբեր գործընկերների և շահագրգիռ կողմերի հետ՝ մասնավորապես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ինչպես նաև գիտակրթական կազմակերպությունների հետ:</u>

<u>2020թ.-ից հանդիսանում եմ ՄԱԿ ԵՏՀ-ի էներգաարդյունավետության փորձագիտական խմբի փոխնախագահ և ՄԱԿ ԵՏՀ-ի շենքերի էներգաարդյունավետության ստանդարտների համատեղ աշխատանքային խմբի նախագահ:</u>

<u>Ավելի քան 14 հրապարակումների, նորմերի, ձեռնարկների, շտեմարանների, հոդվածների և այլ մասնագիտական նյութերի հեղինակ/համահեղինակ եմ:</u>

Առդիր՝ **<u>8</u>** էջ:

Հայտատու՝ **Վահրամ Ջալալյան**

08 դեկտեմբերի 2025թ.